

1015

Լ Ի Ն Ի Ն Ք

ԱՌՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ



613
Տ-22

ԻՍՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Մ Ո Ս Կ Վ Ա 1926

613
b-22

Ե. Վ. ՏԱՅԼԿՆԵՐ

Լ Ի Ն Ի Ն Ք

ԱՌՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Պետական Գիտական Խորհրդի Մանկավարժ. Սեկց. կողմից թույլատրված է I աստիճանի դպրոցներին համար:

002

2010

22467


Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 64087

БИБЛИОТЕКА
Академии наук
УРСР

45350 121

ЦЕНТРАЛЬНАЯ БИБЛИОТЕКА
АКАДЕМИИ НАУК
УРСР
И. А. МОНТАНЬА
УРСР

9526-51




Նկ. 1.

ԱՌԱՎՈՏՅԱՆ.

Ժամի ութն է: Սուրբիկը զարթնում է, ձգվում: Վեր կենալ չի ուզում: Մայրը շուր է յեփում թեյի համար: Հայրը արդեն գնացել է գործարան: Գույրը՝ Նազիկը լվացվում է.—Վեր կաց. մի՛ ծուլանար,—ասում է քույրը յեղբորը.—հենց վոր զարթնում ես՝ պետք է վեր կենաս. անկողնից: Յերկար պառկելուց՝ մարդու մկանները թուլանում են, ու մարդ առույգ չի լինում»:

Ու Նազիկը մոտեցավ Սուրբիկին, դեն ձգեց վերմաղը, և նա ստիպված վեր կացավ:

Գնաց Սուրբիկը խոհանոց, ձեռքերը, յերեսը, վիզը, ականջները լվաց, բերանը վողողեց: Ուզում էր



Նկ. 2.

առանց սապոնի լվացվել, բայց մայրը վրա հասավ.— «Ձե, սիրելիս, եղպես չեղավ, սապոնով պետք է լվացվել. և անլվա ձեռքերդ աչքերդ մի՛ տար. աղանջներդ ել, վրդդ ել սապոնով լվա».— Յեվ Սուրբիկը շատ մաքուր լվացվեց:

Թեյ խմեց, կերավ: Վերարկուն դեռ յերեկոյան եր մաքրել. հագավ ու դուրս յեկավ տանից: Արագարագ քայլում եր ձյունի վրա և մաքուր ողը ազահուլթյամբ շնչում:

ԱՌՈՂՋ Ե ՆԱ, ՈՎ ԿԱՆՈՒՆ Ե ՎԵՐ ԿԵՆՈՒՄ.

ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՄԵՆՔ ԲԱՂՆԻՍ ԵՆՔ ԳՆՈՒՄ.

Ամեն որ պետք է սառը ջրով լվացվել: Ով սառը ջրից չի վախենում, նա չի մրսի: Շաբաթը մեկ անգամ պետք է բազմիս գնալ կամ վաննայում, տաշտում լողանալ տաք ջրով, սապոնով: Լվացվելուց հետո պետք է կտրել ձեռքերի և վոտների յեղունգները: Լողանալուց հետո գլուխը պետք է մանր սանրով սանրել, մաքուր սպիտակեղեն հագնել:

ՄԱՅՐԻԿ, ՄԻ ԲԱՐԿԱՑԻՐ, ՎՈՐ ՅԵՍ ՇԱՏ ՍԱՊՈՆ ԵՄ ԳՈՐԾԱԾՈՒՄ.

Առաջ յես շտա՛պ կյի լվացվում և առանց սապոնի: Այժմ սովորել եմ ամեն որ աղանջներս ու վիզս ել սապոնով լվանալ: Ուտելուց առաջ ձեռքերս լվանում եմ սապոնով: Ի՛նչուց առաջ վոտքերս ել եմ հաճախ լվանում: Ձե՞ վոր վոտքերը ամենից շատ են կեղտոտվում: Իսկ շաբաթ որը ամբողջովին, ինչպես պետք է լվանում եմ: Պատահում եր, վոր մայրս ասում եր.— «Սապոն շատ մի՛ փչացրեք, սապոնը թանգ է»: Իսկ յես նրան պատասխանում եյի.— «Ե՛, մի բարկացիր, սապոնը— առողջությունն է. քանի շատ սապոն գործածենք, ենքան առողջ կլինենք»: Այնուհետև մայս այլևս վոչինչ չեր ասում:

ՅԵՍ ԻՆՉԻՑ ԽԼԱՅԱ.

Սկսեցի վատ լսել: Հետս խոսում են՝ լավ չեմ հասկանում, չեմ լսում: Մայրս ինձ տարավ բժշկի մոտ: Բժիշկը քննեց աղանջներս և ասաց.— «Այ փոքրիկ, աղանջներիդ անցքերը կեղտից բուլրովին բռն-

վել են»։ Յեւ չնայ սողան լուծեց տաք ջրի մեջ ու դրանով ականջներս լվաց։ Յերբ վերջացրեց, ասաց. — «Մարդկանց ականջների անցքերում շարունակ կեղտ է գոյանում. ով իր ականջները չի մաքրում, եղ կեղտը շատանում, ամրանում է և խցանի պես անցքերը փակում ու մարդ լավ չի կարողանում լսել։ Ձի կարելի այդպես փնթի լիեել»։ Լվանալուց հետո՝ յես սկսեցի լավ լսել։

ԻՆՉՊԵՍ ԵՐ ՆԱԶԻԿԸ ՏԱՆԸ ԱՇԽԱՏՈՒՄ, ՅԵՐԲ ՍՈՒՐԻԿԸ ԴՊՐՈՑ ԵՐ ԳՆՈՒՄ.

«Դե, Նազիկ. սենյակը կարգի բեր, յես գնում եմ շուկա գնումներ անելու», — ասաց մայրը և դուրս



Նկ. 3.

գնաց։ Նազիկը բաց արեց ողանցքը և մի լավ թափ տվեց անկողինը։ «Անկողնում մենք անց ենք կացնում տասը ժամ. նա մեր յերկրորդ բնակարանն է. նա պետք է մաքուր լինի», — հիշեց Նազիկը այն պլակատը, ի՞նչ կարդացել էր դպրոցում։ Հետո նա ամանները լվաց տաք ջրով։ Ավելը թրջեց, թափ տվեց և հատակը մաքրեց։ Հետո շորը մի քիչ թաց արեց ու դրանով փոշին մաքրեց։




Նկ. 4.

ՀԱՏԱԿԸ ՉՈՐ ԱՎԵԼՈՎ ՉՍՐԲԵՍ:
ՉՈՐ ԱՎԵԼՈՎ ՍՐԲԵԼՈՎ՝ ՓՈՇԻ ՅԵՆ ԲՋՐՉՐԱՅՆՈՒՄ:
ՓՈՇԻՆ ԹԱՅ ՇՈՐՈՎ ՍՐԲԻՐ:
ՓՈՇՈՒ ՄԵՋ ԿԱՐՈՂ Ե ՎԱՐԱԿ ԼԻՆԵԼ:
ՓՈՇԻՆ — ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆ Ե:

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՓՈՇՈՒՑ:

Գարնանն ու աշնանը տանտիկիները թափ են տալիս գորգերը, կապերտները, վերմակները, ներքնակները և այլն: Յեվ այդ անելիս ահագին փոշի յե բարձրանում:




Նկ. 5.

Պետք է այդ թափ տալ բնակարանից հեռու: Այդ աշխատանքի միջոցին չպետք է խոսել, վոր փոշին բերանը չընկնի: Իսկ յերեխաները այդտեղ չպետք է լինեն:

ԹԱՐՄ ՈՂԸ ՏԱՐՎԱ ԲՈՂՈՐ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ ԵՆ ՈԳՏԱԿԱՐ Ե.

«Նազիկ,—ասաց մայրը՝ շուկայից վերադառնալով,—աշնանը, յերբ խոնավ է և անձրևային, ողանցքը չպետք է բաց անել»:— «Վո՛չ, մայրիկ,—պատասխանեց Նազիկը,—բոլոր յեղանակներին ել պետք է մաքրել սենյակների ողը: Փակ բնակարանում ողը շատ է կեղտոտվում»:— «Իսկ փողոցում վո՞րտեղից է թարմ ող գոյանում»:— «Փողոցում վոչ առաստաղ կա և վոչ ել պատեր: Քամին է բերում ողը դաշտից և անտառից: Բույսերն այնտեղ ողը մաքրում են: Այնտեղ վոչ գործարանային ձխնելույզներ կան և վոչ ել մարդիկ,—ողը մաքուր է: Պետք է խնդրել



Նկ. 6.

հայրիկին, վոր հարց բարձրացնի Խորհրդում՝ մեզ մոտ
ինչքան կարելի է շատ ծառեր տնկեն ե կանաչ հրա-
պարակներ լինին: Ողբ մաքուր և առողջարար կլինի:

ՎՈՐՔԱՆ ՇԱՏ ԱՅԳԻՆԵՐ,
ՎՈՐՔԱՆ ՇԱՏ ԿԱՆԱՉ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ,
ԱՅՆՔԱՆ ՇԱՏ—ԱՌՈՂՋ ՅԵՐԵՆԱՆԵՐ:

ՄԱՅՐՍ ԻՆՉՈՒ ԻՐԵՆ ՎԱՏ ԶԳԱՅ.

Մայրս գնացել եր մեր հիվանդ հարկանին այ-
ցելության: Հիվանդը պառկած եր փոքրիկ սենյա-
կում, ուր շատերն էյին հավաքվել. վոմանք յեկել
էյին առողջութունն հարցնելու, վոմանք ել ոգնե-
լու: Լուսամուտները ամուր փակված էյին: Մայրս
իրեն վա՛տ զգաց: Գունատվ՛ց, գլուխը պտույտ յե-
կավ և քիչ եր մնում վայր ընկներ: Չայն սովինք Նա-
զիկին: Նազիկը իրեն չկորցրեց. իսկույն բաց արավ
լուսամուտները, մորս դեմքը և կուրծքը ջրով թըր-
ջեց, արորեց վոտներն ու ձեռները, հոտոտելու սվեց
նաշատիբի սպիրտ: Մայս ուշքի յեկավ: Ահա՛ թե ինչ
է նշանակում կեղտոտ ողում անցկացնել:

Ի՞նչ որեկան ֆանի՞ անգամ ես սեւեյակիդ ողբ
մախրում:

ԱՐԴՅՈՒՔ ԱՌՈՂՋԱՐԱՐ Ե ՇԱՏ ՏԱՔ ՍԵՆՅԱԿՈՒՄ
Ա Պ Ր Ե Ն .

«Հիմա, Նազիկ,—ասաց մայրը,—յես կվառեմ
վառարանը»: —«Մայրիկ, յես արդեն վառել եմ՝ յերբ

դու շուկա էյիր գնացել»: —«Հապա ինչո՞ւ լավ տաք չե՞ս:
—«Այսուհետեւ, մայրիկ, յես թույլ չեմ տա, վոր սեն-
յակը բաղնիս դարձնես: Բժիշկը մեզ բացատրեց, վոր
տաք ողին սովորելը վասակար է, —մարդ դրանից
նազուկանում ե և շո՛ւտ ե մրսում: Իսկ յես ու Սու-
րիկը ուզում ենք առողջ մեծանալ, ամրապինդ լինել,
վոր փոխարինենք քեզ ու հայրիկին»: —«Ահա՛ թե ինչ,
ձվերն հավին խե՛լք են սովորեցնում», — ժպտալով
ասաց մայրը:

Ի՞նչ սաւը ցերմայափ ունե՞ք:

Ջերմայափը ֆա՞նի ասի՞նք և ցույց տալիս սա-
ւը յե՛վ դպրոցում:

ՋԵՐՄԱԶԱՓԻ ՄԱՍԻՆ.

Տաքությունից մարմինները լայնանում են, իսկ
ցրտից—սեղմվում: Գուք յերբեիցե տեսե՞լ եք սնդիկ.
դա լեցնում են ապակյա խողովակի (ներքը՝ լայն)
մեջ և անցքը բոլորովին զոցում: Խողովակը կպցնում
են քանոնի վրա և խրում ձյունի մեջ: Սնդիկը ցըր-
տից սեղմվում ե և իջնում խողովակի ներքեի մասում:
Գանոնի վրա ա՛յն տեղում, ուր սնդիկը կանգ ե առ-
նում, նշանակում են գերու: Հետո խողովակը հանում
են և հետզհետե տաքացնում: Սնդիկը բարձրանում
է: Յեթե խողովակը գուշությամբ բռնենք յեփ յե-
կող ջրի գոլորշու վրա, սնդիկը խողովակով վեր կբարձ-
րանա և այնուհետե կանգ կառնի, այլևս չի բարձ-
րանա: Այն տեղը, մինչև վորտեղ նա բարձրացել եր,



Նկ. 7.



նշանակում են 100 թվով: Այնուհետև քանոնի այդ մասը—զերոյի և 100-ի միջև յեղած տարածութիւնը — բաժանում են 100 հավասար մասերի: Ամեն մի մասը կոչվում է աստիճան (գրաւուս): Այդպիսի բաժանում ունեցող ջերմաչափը կոչվում է Յեյլսի ջերմաչափ: Դասարանում պետք է լինի 13 աստիճան: Դրանից ավելի բարձր աստիճանի տաքութեան մեջ քնելն է լավ չէ: Յեթե ջերմաչափը դնենք մեր թևի տակ (իսկ դրա համար շինում են ուրիշ տեսակի ջերմաչափեր), ապա կտեսնենք, վոր առողջ մարդու տաքութիւնը ցույց է տրվում 37 աստիճան: Իսկ յեթե սնդիկը 37 աստիճանից ավելի յե բարձրանում, այդ նշանակում է, վոր մարդ տկար է:



Նկ. 8.

ԴՊՐՈՑՈՒՄ.

ՍՈՒՐԻԿԸ — ՈՐԱՊԱՆՆԵՐ.

Այսօր Սուրիկը դասարանում որապահ է: Պետք է վաղ գնալ դպրոց և բոլոր յերեխաներին նայել, թե արդյոք մաքուր են ձեռները, ականջները, վիզը, հագուստը. արդյո՞ք բոլորն էլ ունեն թաշկինակներ կամ մաքուր շորի կտորներ՝ թաշկինակի փոխարեն: Պետք է նայել, թե արդյո՞ք դասարանի ողջ մինչև 13 աստիճան է տաքացել. դասամիջոցներին ողանցքը պետք է բաց անել: Այսօր աշակերտներին պետք է ծաղիկ



Նկ. 9. Ջեններ.

պատվաստել: Ե՛ս ա գործ ունի կատարելու և որպան Սուրբիկը:

Ո՞վ Ե ՋԵՆՆԵՐԸ, ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱՂԻԿ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ.

Տասնութերորդ դարի վերջերին ապրում էր անգլիացի մի բժիշկ, Ջեններ անունով: Նա մարդկանց սովորեցրեց կովել ծաղկիղեմ, վորից ախրա՛ն շատ մարդիկ եյին մեռնում: Ծաղկով հիվանդացած մարդու մարմնի վրա գոյանում են փոքրիկ հանգույցներ. դրանք դառնում են բշտիկներ և լցվում թարախով:

Դուք, անշուշտ, տեսած կլինեք մարդիկ՝ քոնված դեմքերով: Նրանք հիվանդացել են ծանր հիվանդությամբ — ծաղկով, վորից հետո նրանց դեմքին մնացել Ե հիվանդության հետքը, վոր ալյանդակում Ե նրանց յերեսները:

Ջենները ծաղիկ պատվաստեց հորթին: Հորթը հիվանդացավ և առողջացավ: Հորթի ծաղկի հեղուկը Ջենները հավաքեց սրվակի մեջ և դրանով սկսեց պատվաստել այն մարդկանց, վորոնք այդ հիվանդությամբ դեռ չեյին հիվանդացել: Այդ դեպքում բշտիկներ են գոյանում միայն պատվաստած տեղում: Յե՛վ դրանից հետո մարդ յոթը տարի ալլեա չի հիվանդանում ծաղկով: Դրա համար ել՝ նախագո՛ւշողական պատվաստ պետք Ե կատարել ամեն 7 տարի:

Քեզ յա՛նի անգամ եմ ծաղիկ պատվաստել:

ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԸ:

Բժիշկը որպանին առաջարկեց մեծ դասամիջոցին ընդհանուր ժողով գումարել: Սարգսյանին մենք ընտրեցինք նախագան: Բժիշկը խոսք խնդրեց և սկսեց խոսել այն մասին, վոր անհրաժեշտ Ե ունենալ մաքրության և առողջության անկյուն: Մենք վորոշեցինք ինքներս պատրաստել սլակատներ և դիագրամներ: Հանձնարարեցինք կազմել աղյուսակ՝ թե ո՞վքեր են ատամները մաքրում: Մեր դասարանում կան 19 աշակերտ: Բոլորին հարցրեցի: Դուքս յեկավ, վոր՝

4	ԱՏԱՄՆԵՐԸ ՅԵՐ- ԲԵՔ ԶԵՆ ՄԱՔ- ՐՈՒՄ
5	ԱՏԱՄՆԵՐԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ ՄԻԱՑՆ ՅԵՐԲԵՄՆ- ՅԵՐԲԵՄՆ
10	ԱՏԱՄՆԵՐԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՈՐ

Իրանից ել՝ այդ չորս աշակերտները ատամները կեղտոտ են: Բժիշկն ասաց, վոր ծնողական ժողովին պետք է առաջարկել, վոր բոլորն ել իրենց յերեխա-
ների համար գնեն ատամի խոզանակ և կավիճի զտած փոշի:

Բացահր՛ր, քե Սուրիկն ի՞նչպես է չափել վերե-
վի 3 աղյուսակները:

ԱՀԱ ԻՆՉՊԻՍԻ ՊԼԱԿԱՏՆԵՐ ՊԵՏՔ Ե ԿԱԽ ՏՐՎԻՆ
ՄԵՐ «ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԱՆԿՅՈՒՆՈՒՄ».

1. ԼՈՒՅՄՆ ՈՒ ՈՂԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ,
ԱՌԱՆՑ ԴՐԱՆՑ ՄԱՐԴԻԿ ՀԻՎԱՆԿ ԵՆ.

2. ԲԱՑ ԱՐԱ ԱՄԱՌԸ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ,
ԻՍԿ ԶՄԵՌԸ—ՈՂԱՆՑՔԸ.

3. ՀԱՏԱԿԸ ՍՐԲԵԼԻՍ—ՅԵՐԲԵՔ ՓՈՇԻ ԶԲԱՐՁՐԱՑՆԵՍ.

4. ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՅԵԹԵ ՄԱՔՐՈՒՐ ԼՎԱՑՎԵՍ.
ԴՈՒ ՄԻՇՏ ԱՌՈՂՋ ԿԼԻՆԵՍ.

5. ՎԱՐԱԿԸ ՏԵՍԱՆԵԼԻ ԶԵ, ԲԱՅՑ ԶԵՌՔԵՐԻՆ ԿՊՉՈՒՄ Ե.

Ձեր դասարանում կա՞ «մախրոքյան յեվ առող-
ջոքյան անկյուն»:

Ի՞նչպիսի սրակասկեր կան այնտեղ կախ սրված.



Նկ. 10.

«ԻՆՉՊԵՍ ԱՊՐԵՆՔ, ՎՈՐ ԱՍՈՂՋ ԼԻՆԵՆՔ»:

Այսպես է կոչվում մեր պատի - լրագրի այն մա-
սը, վոր հատկացված է առողջության վերաբերյալ
հարցերին: Ահա՛ թե ի՞նչ է նրանում գրված.—



ՅԵՍ ԱՌՈՂՁ ԵՄ.

Ձեռքերս մաքուր են, յեղունգներս մաքուր են. ատամներս մաքրությունից սպիտակ փայլ են տալիս. գլուխս մանր սանրով միշտ խնամքով սանրում եմ: Բերանս փակած՝ քթածակերովս ազատ շնչում եմ և կուրծքս լիուլի մաքուր ող և ներշնչում: Ճամբա յեմ գնում գլխաբաց. ուշադրություն չեմ դարձնում անմիտ խոսքերի—թե կարող եմ մրսել. մանկությունից եմ յես ընտելացել այսպես ապրել. առավոտյան ցողին, վոտաբորիկ յես դպրոց եմ վազում: Յես չեմ վախենում դաշտի քամուց, վորի հովին յես ավելի՛ թեթև յեմ շնչում, իսկ սենյակի նեխված տաք ողը յես յերբեք տանել չեմ կարողանում: Ապա ո՞վ կցանկանար հետևել իմ որինակին:

ՇՍՏ ՏԱՔ ՄԻ ՀԱԳԻՆՎԻՐ.

Ամառը յես ման եմ գալիս վոտաբորիկ և գլխաբաց: Վիզս և կուրծքս շատ չեմ փաթաթում նաև ձմեռը: Յերբ ցուրտ է, վոտնաման եմ հագնում, վոր վոտքերս չսառչեն ու չթրջվեն: Յես մանկությունից եմ ընտելացել թեթև հագնվել է լվացվում եմ սառը ջրով: Դրա համար ել ուրիշների նման յես ամեն մի թեթև քամուց չեմ մրսում:

ՅԵՍ ԲԵՐԱՆՍ ՁԵՄ ԴՆՈՒՄ ՎՈՉ ՄՍՍՍ, ՎՈՉ ՄՍՏԻՏ, — ՅԵՎ ՎՈՉ ՄԻ ԲԱՆ, ՎՈՐ ԿԱՐՈՂ Ե ԿԵՂՏՈՏ ԼԻՆԵԼ.

Մատերով մենք ամեն ինչ բռնում ենք, մեր մատերը ամեն ինչի դիպցնում. և դռներին, և կատվի



Նկ. 11.

մազերին, և հողի հետ ենք խաղում: Ամեն տեղ — փոշի յե, վոր անցնում է մեր մատերի վրա: Կան այնպիսի յերեխաներ, վորոնք սիրում են մատը բերանը դնել և յեղունգները կրծել, կամ մատիտն են բերանը տանում ու կրծում. այդ միջոցին նրանք փոշու հետ միասին իրանց բերանն են տանում վարակը ու կուլ տալիս:

Ձեր դասարանում, հոգուտ աղյաս յերեխաների, դուր նշանակե՞լ ե՞ք տոգանի՞ նրանցից, ով կրծում է յեղունգները կամ մատիտը:

Ինքու՛վ եւ վնասասկար ԾԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԸ ՅԵՎ
ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՆՐԱՆՑ ԴԵՄ.

ՃԱՆՃԵՐԸ, ՎՈՋԻԼՆԵՐԸ, ԼՎԵՐԸ, ԲԱՂԼԻՆՋՆԵՐԸ, ՄՈՒ
ԾԱԿՆԵՐԸ ՎԱՐԱԿԵՆ ՏԱՐԱԾՈՒՄ: ՎՈՋՆՉՍՅՐԵՔ ԳՐԱՆՑ:



Նկ. 12.

Ճանճերը կարող են տարածել վորովայնի տիֆի, խոլերայի և արնելուծութեան վարակ: Այս հիվանդութեանները դեպքում վարակը գտնվում է կղզկղանքի մեջ: Դրա համար ել այն բոլոր իրերը, վոր կեղտոտված են կղզկղանքով, պետք է ճանճերից պահպանել. ճանճերը, թռչելով ամեն տեղ, կարող են վարակը փոխադրել կերակրի վրա. չե՞ վոր նրանք հացին և ուրիշ ուտեստի մթերքներին կաշում են թաթիկներով, քթերով կամ թևիկներով:

Յեթե սենյակը մաքուր են սրբում, յեթե կերակրի մնացորդները թափթփված չեն մտում, յեթե բակում աղը չկա, — ճանճեր քիչ են լինում: Արտաքնոցն ևս պետք է մաքուր պահել:

2). Շորի վոջիկները տարածում են բժավոր և անդրադարձ տիֆի վարակը: Վոջիկն հիվանդին կծելով, նրա արյունը ծծում է. հետո կծելով առողջին՝

սրան վարակում է: Վոջիկներից կարելի չէ ազատ լինել՝ մաքուր պահելով մարմինը, մազերը և հագուստը: Հագուստը պետք է ուշադրութեամբ նայել, քամուն տալ և մաքրել: Սպիտակեղենը պետք է փոխել ամեն շաբաթ, իսկ գլուխը սանրել ամեն օր:

3). Լվերն ապրում են հատակի և պատերի ճեղքերում: Բնակարանը վորքան մաքուր է սրբվում, այնքան նրանում քեչ է փոշի, այնքան դժվարութեամբ են լվերը նրանում թագնվում: Լվերի վտտիկները ուժեղ են, — ահա՛ թե ինչու նրանք այնպիսի մեծ թռիչքներ են անում:



Նկ. 14.

Փնթի մարդկանց, վորոնք թույլ են տալիս, վոր նրանք տանը բազմանան: Բաղլիջները կծած տեղը քորելուց բժեր են գոյանում: Պետք է մաքուր պահել պատերը, մահճակալները, տախտերը, աթոռները: Ով անկարող է հաղթել այդպիսի փոքրիկ պարազիտին, նա չի կարողանա հաղթել և մեծին:


5). Սովորական մոծակը սարսափելի չէ, բայց կա մոծակի մի առանձին տեսակը: Յեթե նա ճահճային տեստ ունեցող հիվանդին



Նկ. 13.




Նկ. 15.



Նկ. 16.

կծի, հիվանդի արյան հետ միասին այդպիսի մոծակի ստամոքսը կրնինի այդ հիվանդի վարակը: Իսկ հետո մոծակը կծելով առողջին -- վարակում է նրա արյունը և կարճ ժամանակից հետո մարդ սկսում է ջերմել ու թուլանալ: Մոծակները ձու յեն դնում կարգնած ջրի մեջ -- ճահճում, ջրով լցված փոսերում, լճերում, խանդակներում և այլն: Մոծակների ձվերը ձմեռը մնում են ջրի մեջ, իսկ գարնանը, յերբ արևը տաքացնում է, դրանցից դուրս են գալիս ձագեր: Ծիծեռնակներն ու ուրիշ թռչուններ վոչնչացնում



Նկ. 17.

են մոծակներին, բայց նրանք բոլորին վոչնչացնել չեն կարող: Շատ մոծակներ են ուտում մանավանդ չղջիկները: Ճահիճները չորացնում են, ջրափոսերը նավթ են շաղ տալիս, -- այն ժամանակ ձվերը վոչնչանում են ու ճահճային տենդը վարակված տեղերից անհետանում է:


6). Ահա՛ և քոսի վոջիլը, -- մտնում է մարդու կաշվի տակ և այնտեղ ապրում: Կաշին ծածկվում է թարախոտ բշտիկներով: Քոսը -- սաստիկ է: Իսկ այդ բոլորը -- կեղտից և վնթիությունից է: Յեթե տեսնեք, վոր մի աշակերտ ձեռքերի վրա բծեր ունի, նրան ուղարկեցեք բժշկի մոտ, վորպեսզի նա բժշկվի և ձեզ ել չվարակի (նկ. 17):

ԿՈՐՉԵՆ ԲՈՂՈՐ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԸ


ԻՄ ԱՂԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉԸ.

Սիրաս սկսեց խառնել: Մայրս դիտեց իմ արտաթորությունը և նրա մեջ գտավ սպիտակավուն մանր կտորներ (նկ. 18 և 19): Նա դրանք ցույց տվեց բժշկին: Բժիշկն ասաց, վոր դրանք ճիճուի մասնիկներ են և վոր յես ճիճու յեմ ստացել լավ չյեփած մսից, կամ ձկնից: Այդ ճիճուն յերկար է -- մի քանի

մետր յերկարությամբ: Նա մաշում է մարդուն: Բժիշկը դեղ գրեց, և ամբողջ ճիճուն ինձնից ընկավ:




Նկ. 18.



Նկ. 19.

ՉՊԵՏՔ Ե ՇՈՅԵԼ ԿԱՏՈՒՆԵՐԻՆ ՈՒ ՇՆԵՐԻՆ. ՆՐԱՆՑԻՑ ԿՕՐՈՂ ԵՆ ՄԱԿԱԲՈՒՑԹՆԵՐ ԱՆՑՆԵԼ ՄԱՐԴՈՒ ՎՐԱ.



Նկ. 20.

Դ Պ Ր Ո Ց Ի Ց Հ Ե Տ Ո՛ Տ Ա Ն Ը.

Ճ Ա Շ Ի Ն.

Սուրիկը դպրոցից յեկավ քաղցած:

— Դե գնա ձեռքերդ լվա, — ասաց մայրը:

— Ձեռքերս ի՞նչ են յեղել վոր, մաքուր են:

— Վ՛ո՛չ, չի կարելի, — մեջ ընկավ Նազիկը, —

ամեն վարակ նկատելի չէ: Վարակը չի յերևում, իսկ ձեռներից կաշում է: Ձեռք կտաս հացին — և վարակը հացի հետ բերանդ կտանես:

Սուրիկը ձեռքերը լվաց: Նստեցին ճաշելու: Սուրիկը շտապում է: Քի՛չ է ծամում:


— Սո՛ւրիկ,— ասաց մայրը,— ատամներդ նրա համար են, վոր կերակուրը բերանում լավ ծամեն, իսկ դու շտապում ես, թույլ չես տալիս, վոր նրանք աղան: Ծամի՛ր ինչպես պետք է:

Ճաշից հետո Սուրիկը գուրս գնաց բակ՝ չմուշկ խաղալու:

ՈՒՏԵՆՈՒՅ ԱՌԱՋ ՁԵՌՔԵՐԴ ԼՎԱ՛. ԿԵՐԱԿՈՒՐԸ ԼԱ՛Վ ՆԱՄԻՐ.

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՔԻԹԸ ՍՐԲԵՆ.

Սուրիկը բակից վերադարձրացավ: Սկսեց խնչել փչո՛ւմ ե յերկու քթածակերով՝ ինչքան ուժը պատում ե. և ուժ գործ դնելուց—կաս-կարմիր դարձավ. իսկ նազիկը նրան ասաց. «Մեկ քթածակդ փակիր, դուրս փչելով մյուս քթածակովդ, և ընդհակա-



Նկ. 22.

ռակը: Յերկու քթածակովը միանգամից խնչելը վսասակար է:


ՍՈՒՐԻԿԸ ԽՆԴԻՐ Ե ԼՈՒԾՈՒՄ.

Սուրիկը նստեց դասերը պատրաստելու—խնդիր լուծելու:

Ահա՛ այդ խնդիրը.

Տունն ուներ յերեք հարկ: Ամեն մի հարկում կար յերկու բնակարան: Ամեն մի բնակարանում յերկու սենյակ: Հյուանը քանի՞ ողանցք պետք է շիներ, վոր կարելի լիներ մաքրել ամեն մի սենյակը: (Նկ. 22):

Պատասխանեցե՛ք, վո՞րքան:




Նկ. 23.

ԳԻՐԲԸ ՄԻ ԿԵՂՏՈՏԻՐ.

— Լամպը վառի՛ր, Սուրբիկ, և զիր քո զիմաց: Լամպը պետք է լուսամփոփ ունենա,—ասաց Նազիկը: Սուրբիկը նստեց գիրքը կարդալու: Կարդաց մի յերես: Պետք էր թերթը շուռ տալ: Սուրբիկը մատը թքոտեց և թերթը շուռ տվեց:

— Սուրբիկ, է՛յ, Սուրբիկ, ի՞նչ ես գիրքը կեղտոտում: Գիրքը գրադարանինն է: Յեթե բոլորն ել այդպես վարվեն, գիրքը շատ կկեղտոտվի և վարակիչ կղառնա: Ա՛յ դու անմիտ, այդպես չի՛ կարելի:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԲԵՐԸ — ՍՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԵՆ,
ԳՐԱՆՅ ՀԵՏ ՊԵՏՔ Ե ԽՆԱՄՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ,
ՅԵՎ ՄԱՔՈՒՐ ՊԱՀՊԱՆԵԼ.



Նկ. 24.

ԿԵՐԱԿՈՒՐԸ ԲԱՅ ՄԻ ԹՈՂ.

Նազիկը սկսեց ընթրիքը պատրաստել: Հացը կտրտեց; լցրեց ամանի մեջ և ծածկեց. ծածկեց նաև շաքարամանը և կաթնամանը:



Նկ. 25.

— Նա՛զիկ, ի՞նչ ես պինդ պինդ փակում. չե՞ վոր հիմա ուտելու և խմելու յենք:

— Իսկ մինչև վոր կուտենք, փոշի կնստի վրան, ճանճերն ևս կարող են կեղտոտել. իսկ դրանք չե՞ վոր ամեն տեղ թռչում են, աղբանոցումն ել, արտաքնոցումն ել են լինում: Կարող են վարակ բերել:

ՅԵՍ ԶԵՄ ԹՈՂՆՈՒՄ, ՎՈՐ ՃԱՆՃԵՐՆ ԻՄ ՃԱՇԻՆ
Ն Ս Տ Ե Ն.

Կորե՛ք, ճանճեր, հեռացե՛ք, իմ ճաշին մի մոտեցե՛ք, — դուք ինձ համար ընկեր չեք, դուք վողջ բակով թռչել եք. աղբանոցում եք յեղել, թաթիկներդ կեղ-

տոտել. Լինճիթներդ վարակիչ հեռու՛ւ, հեռու՛ւ իմ ճաշից, կորե՛ք, ճանճեր, հեռացե՛ք:

ԸՆԹՐԻՓԻ ԺԱՄԱՆԱԿ.

Մայրը վերադարձավ լվացարանից. առաջ պատահում եր՝ նա սենյակումն էր շորերը լվանում: Բայց Նազիկը մորը հանդիստ չէր տալիս, — չե՞ վոր բժիշկը ասել էր, վոր գոլորշուց խոնավություն է առաջ գալիս, իսկ խոնավ բնակարանում ապրելը վնասակար է: Մայրը զիջեց, սկսեց լվալ լվացքատանը:

Յեկավ հայրը գործարանից: Սձղանի վրա դրեց մի կապոց: Մոտ վազեց Սուրիկը թուչկոտելով.

— Հայրե՛կ, ի՞նչ էս բերել:

— Ահա՛, Նազիկ, բա՛ց արա: Բերել եմ պնակներ, վոր ամեն մեկս առանձին ամանից ուտենք: Գործարանում բժիշկը մեզ բացատրեց, վոր ամեն մեկը առանձին անկողնում պետք է քնի, առանձին ամանից ուտի և առանձին սրբիչով սրբվի: Յես բերել եմ դավաթ, ուր պետք է յեփացրած ջուր լըցնենք: Հում ջուր խմելը վնասակար է: Բայց յեփացրած ջուրն ևս ամեն ոք պետք է փոխել:

ՀՈՒՄ ԶՈՒՐ ՄԻ ԽՄԻՐ.
ԿԵՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՄԱՆԻՑ.

ՈՎ ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՍԵՆՅԱԿԻ ՈՂԸ ՄԱՔՐՈՒՄ Ե, ՆԱ. ԳԻՇԵՐԸ ՄԱՔՐՈՒՐ ՈՂ Ե ՇՆՉՈՒՄ.

Նազիկը ողանցքը բացեց:

— Սուրիկ, վերարկուդ հագիր, թե չես կմրսես:

— Վո՛չ, մայրիկ, այն ժամանակից, լերք յես սկսեցի սառը ջրով լվացվել, յես չեմ մրսում և ցրտից չեմ վախենում: Կմրսի նա, ով տաք ջրով է լվացվում:



Նկ. 26.

ԻՍԿ ՆԱԶԻԿԸ ՀԱԳՆՈՒՄ ԵՐ ՎՈՏՆԱՄԱՆՆԵՐԸ ՈՒ ՅԵՐԳՈՒՄ.

Ինձ մոտ մաքուր է, սարգ ու կարգ կա, յես չեմ թքում հատակին. լուսն ու վոջիլը, ճանճն ու բաղլինջը թշնամիներս են փոխերիմ. ինձ ոգնում է վառ արևի ճառագայթները փայլուն, ինձ ոգնում է քամին դաշտի և մաքրությունն իմ ձեռների: Կորչի կեղտը, կորչի՛ կեղտը, կեցցե՛, կեցցե՛ մաքրությունը:



Նկ. 27.

ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՏԱՄՆԵՐԴ ՍՐԲԻՐ:


— Չմոռանաս քնելուց առաջ ատամներդ սրբել,
— ասաց հայրը Սուրբիկին:

Սուրբիկը պատուհանից վերցրեց իր բաժակը, իր խոզանակն ու սկսեց ատամները մաքրել:

— Խոզանակը քսիր վերևից ներքև և վոչ թե աջից ձախ. թե չես ատամներիդ արանքում մնացած կերակրի մնացորդները չես սրբել: Իսկ դրանից — ատամները ցավում են ու փշրվում: Դեռ վաղ ե, վոք դու անատամ քավթառ դառնաս:

ՄԱՔՐՎԻՐ ՅԵՎ ՊԱՌԿԻՐ ՄԱՔՈՒՐ ԱՆԿՈՂՆՈՒՄ.

Սուրբիկը պատրաստվեց քնելու: Ատամները սրբեց, բաժակը և խոզանակը վողողեց ու դրեց իրենց տեղը: Վեր բերեց իր յերեսաբբիչը, վոք կախված եր առանձին մեխից. Նազիկը պատին այնքան մեխ եր խփել, ինչքան մարդ կար ընտանիքում. ամեն մեկը



Նկ. 28.

իւր յերեսաբբիչի տեղը գիտեր: Սուրբիկը քնելուց առաջ մի լավ լվացվեց:


**ԳԼՈՒԽԴ ՎԵՐՄԱԿՈՎ ՄԻ ԾԱԾԿԻՐ.
ԲԱՑ ԲԵՐԱՆՈՎ ՄԻ ՇՆՉԻՐ.**

Սուրբիկը անկողնում պառկեց մեջքի վրա: Մեջքին, ձեռքերին և վոտքերին այդպես հարմար ե: Ան-

ցավ մայրը և նկատեց—Սուրբիկը քնած է, իսկ նրա բերանը բաց է: Յե՛վ մտածեց, վոր պետք է Սուրբիկին տանի բժիշկի մոտ, յերեխայի քթածակերը բռնված են, դրա համար ել նա քնում է բաց բերանով. եղպես փրաս է, իսկ բժիշկը կբժշկի:

ՊԵՏՔ Ե ՎԱՂ ՊԱՌԿԵԼ ՔՆԵԼՈՒ:

— Ապրիս, Նազիկ, լավ յերգ ես յերգում, բայց արդեն քնելու ժամանակ է: Ավելի լավ է շուտ պառկել և կանուխ վ'ը կենայ: Յե՛վ միշտ պետք է միևնույն ժամանակին պառկել: Սյդ դեպքում — իսկույն կքնես:



Նկ. 29.

ՎՈՐ ՊԱՏԻ-ԼՐԱԳԻՐՆ Ե ԼԱՎ

Սուրբիկն իր դասարանի հետ գնաց հինգերորդ աշխատանքային դպրոցի հանդիսին: Այնտեղ ևս պատի-լրագրում տեղ էլին հատկացրել մաքրությանն ու առողջությանը: Ահա թե ինչ կարգաց Սուրբիկը իր ընկերների լրագրում.

**ՉԵՌՔ ՏԱԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՑՎՈՒՄ Ե.**

Կան սովորություններ, վորոնցից հրաժարվել մարդիկ դժվարանում են: Այդպիսի սովորությունների թվին է պատկանում միմյանց ձեռք սեղմելը՝ իրար հանդիպելիս և հրաժեշտ տալիս: Դուք, յերեխաներ, վորոնց ձեռքերը միշտ չե, վոր մաքուր են

լինում,—յերբեք չպետք է այդ կերպ բարևեր: Կեղտոր և վարակը ձեռքերից հեշտությամբ են բերանը ընկնում և դանազան հիվանդություններ առաջացնում:

Ձեռքի ՏԱԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՎՈՒՄ Ե.

ՈՒՐ ԼՈՒՅՍ ՈՒ ԱՐԵՎ ՁԵՆ ԸՆԿՆՈՒՄ, ԱՅՆՏԵՂ ԲԺԻՇԿԸ ՀԱՃԱԽ Ե ԼԻՆՈՒՄ.


Մե՞ծ են արդյոք ձեր լուսամուտները: Շա՞տ են դրանք: Սենյակում լույս է Աշխատեցեք լուսամուտներին մուգ գույնի ծածկոցներ կախ չտալ. պատերի պաստառները մուգ գույնի չպետք է լինեն, վոր ավելի՛ լույս լինի: Լույս տեղում կեղտն ել լավ կերևա: Մահճակալները ծածկոցով մի՛ ծածկեք: Յեթե բնակարանում մեկ սենյակից ավելի՛ կա, յերեխաները պետք է քնեն ամենալուսավոր, արևառ սենյակում: Քանի շատ լույս ու արև,—յերեխանե՛ր, դուք այնքան ավելի՛ ամուր ու առողջ կլինեք:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ՀԱՍՄԻԿԸ ԽՆԱՄՈՒՄ ԻՐ ՔՐՈՋԸ

Հասմիկի մայրը հիվանդացավ. նրան տարան հիվանդանոց:

— Լաց մի՛ լինիր, մայրիկ,—ասաց Հասմիկը, յերբ մորը տանում եյին,—քո բացակայության միջոցին կհոգամ փոքրիկ Զորիկի մասին:

Յե՛վ Հասմիկը յեղբոր համար կերակուր յեփեց. կերակրից վեր առավ մի գդալ և մտածում է,—«սպա



Նկ. 30.

մի փորձեմ՝ շատ տաք չե՞ արոյոք»: Նախ ինքը՛ փորձեց և սպա տվեց փոքրիկին:

Հասմիկի ույի՞ղ վարվեց:

Յեթե վոյ—բացասիր, ինչո՞ւ:


ՍՈՎՈՐԻՐ ՈՒՂԻՂ ՇՆՁԵԼ.

Որեկան յերկու անգամ դուրսը կամ բաց պատուհանի առաջ մենք սովորում ենք խորը և դանդաղ շնչել: Ահա թե դա ինչպես ենք անում. ներշնչելիս՝ մենք բարձրանում ենք վոտքի թաթերի վրա, իսկ արտաշնչելիս—իջնում: Շատ անհրաժեշտ է արտաշնչել մինչև վերջ, վորպեսզի մեր կրծքից ավելի լավ դուրս տանք արդեն ոգտագործված ոդր: (Նկ. 31, 32):

Նկ. 31.



Նկ. 32.



ՓՈՂՈՅԻՑ ՓՈՇԻ ՄԻ՝ ԲԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ.

Տան առաջ, դռան մոտ դրեք յերկաթացանց
Դրա վրա ձեր փոստերը մաքրեցեք: Սենյակ մի տա-
րեք ավելորդ կեղտ ու փոշի,—դրանց մեջ վարակ կա:

ԻՆՉՈՒ ԶՊԵՏՔ Ե ՅԵՂՈՒՆԳՆԵՐԸ ԿՐԾԵԼ.

Յեղունգի շուրջը լինում են պատառոտված մոր-
թուկներ. անփուլթ յերեխաները դրանք պոկում են
յեղունկները կրծելով: Գոյանում ե վերջ: Վերքը մոր
թով չի ծածկված: Մատը պաշապանված չի լինում:
Յեղ վերքի մեջ վարակ ե ընկնում: Մատը կարմրում
, ցավում: Դրանից լինում ե նաև արյան վարա-



Նկ. 33.




Նկ. 34.

կումն—ծանր հիվանդութիւնն, վորից մարդ կարող է մեռնել: Յեթե կան պատուոված մորթուկներ, ամենից լալն է դրանց վրա յող քսել և ձեռքերը հաճախ լվանալ:

ԻՆՉՈՒ ՎԱՆԻԿԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՅՈՒՄ Ե ՍՈՎՈՐՈՒՄ.

Վանիկն իրեն լավ է զգում. նա մեղ պես չորս պատերի մեջ փակված չէ: Նա սովորում է անտառային դպրոցում. — այնտեղ պարապմունքները տեղի յեն ունենում դրսում: Իսկ յեթե շատ է ցուրտ կամ

անձրև է դալիս, պարապմունքները փոխադրվում են սենյակում, բայց վոչ չորս պատ ունեցող, այլ յերեք պատ ունեցող սենյակում: Անտառային դպրոցում Վանիկը և՛ սովորում է և՛ բժշկվում: Մեզ մոտ, Խորհրդային Միութեան մեջ այդպիսի դպրոցներ շատ քիչ կան, իսկ Ամերիկայում շատ կան: Յերեխաները այդպիսի բացույցա դպրոցներում ամբապնդում են իրենց կազմվածքը և շատ առողջ են լինում: (Նկ. 34):



Նկ. 35.


ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

ԻՆՉՈ՞Ւ ԶՊԵՏՔ Ի ՀԱՏԱԿԻՆ ԹՔԵԼ.

Գերմանացի դիտնական Կորնետը ապացուցել է, վոր թոխքախտով հիվանդի չորացած բղլամն ել է վարակիչ: Նա կարգադրեց թոքախտով հիվանդի մահճակալի տակ գորգ փռել: Հիվանդի համար թքաման չեյին դրել, այլ կարգադրել էյին, վոր նա թքի գորգի վրա: Միառժամանակից հետո, յերբ գորգն ամբողջովին թքոտված եր, հիվանդին փոխադրեցին ուրիշ սե-

նյակ: Թողեցին, վոր գորգը չորանա: Կորնետը կարգադրեց, վոր չորացրած գորգը հենց այդ սենյակում ել չոր ավելով սրբեն: Դրանից հետո Կորնետը այդ սենյակում վանդակների մեջ բնակեցրեց քառասուն ութ ծովախոզուկներ: Դրանցից քառասուն յոթը հիվանդացան և մեռան տուբերկուլոզից:

Ասա՛, նրանք ի՞նչպես վարակվեցին:




Նկ. 36.

ՎԱՏԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆ Ի՞ՆՉ Ե.

Բացի բույսերից ու կենդանիներից, աշխարհումս ապրում են նաև մանրիկ եյակներ, վոր սովորական աչքով անտեսանելի յեն: Դրանց կարելի յե տեսնել միայն մեծացնող ապակիների միջոցով, վորոնք հարմարեցրած են մի գործիքի մեջ, վոր կոչվում է միկրոսկոպ (մանրադիտակ): (Տես նկ. 37):

Միկրոսկոպը այդ եյակներին մեծացնում է մի քանի հարյուր անգամ: Դրանք կոչվում են բակտերիաներ (մանրեններ): Դրանցից վոմանք մարդուս համար ոգտակար են, մյուսները վնասակար են: Վնասակարները առաջ են բերում վարակիչ հիվանդու-



Նկ. 37. Մանրադիտակ.


թյուններ: Յերբ մեկը վարակիչ հիվանդությամբ հիվանդանում ե, նրանից կարող են վարակվել շատ մարդիկ: Ահա թե ինչու Նագիկի դպրոցում պարապմունքները դադարեցրել եյին, յերբ այնտեղ յերկու աղջիկ հիվանդացել եյին քութեշով (սկարլատինա), այլապես — մեկից մյուսը կանցներ և շատ յերեխաներ կարող եյին հիվանդանալ: Բակտերիաները փոշումեջ են, կեղտի մեջ են, բղամի մեջ են, փոքրիկ կաթիլների մեջ են, վոր աննկատելի կերպով մենք դուրս ենք թողնում մեր բերնից հազալիս և այլն:

Իո՞ւ ի՞նչ վարակիչ հիվանդությամբ ես հիվանդացել:

ՊԱՍՏՅՈՐԻ ՄԵԾ ՄԻՏՔԸ ՅԵՎ ՀՈՎՎԻ ՀՐԱՇԱԼԻ ՍԻՐՏԸ.

Իսկ ի՞նչպես մարդիկ իմացան բակտերիաների (մանրենների) մասին: — Ֆրանսիայում ապրում եր մի գիտնական, Պաստյոր անունով: Նա մեռավ մեզնից 30 տարի առաջ: Մարդկությունը նրանով միշտ կպարծենա: Նրանից առաջ՝ բակտերիաների մասին քիչ գիտեյին: Յերբ նա սկսեց խոսել և ապացուցել, վոր դրանք են վարակիչ հիվանդությունների պատ-


ճառը, այն ժամանակվա հուշն իսկ գիտնականները չեյին համաձայնվում Պաստյորի հետ և խիստ վիճաբանում եյին նրա հետ: Բայց դուրս յեկավ, վոր Պաստյորը ճիշտ եր ասում և գիտնականները կամաց-կամաց ստիպված յեղան նրա հետ համաձայնվել: Պաստյորը բժիշկներին սովորեցրեց պատրաստել կատա-



Նկ. 38. Պաստյոր.

դության դեմ պատվաստ: Դրանով մարդ սովորաբար հիվանդանում ե կատղած շան կամ գայլի կծելուց հետո: Պատվաստը մարդկային շատ կյանքեր ե փրկում, վորոնք կվոչնչանային, յեթե չլիներ Պաստյորի այդ գյուտը:

Այն ճեմարանի առաջ, ուր աշխատում եր Պաս-



Նկ. 39. Բակտերիաներ (մանրեններ)—1) դեֆտերիա, 2) խոլերայի, 3) թոքերի բորբոքման, 4) վորովայնի տիֆի, 5) վերքի բորբոքման և թափախակուման, 6) վերադարձ տիֆի:

տյորը, կարգնեցրած և տասնհինգ տարեկան հովվի մի արձան: Նա իր մարմնով յերեխաներին պաշտպանեց կատղած շների հարձակումից, իսկ Պաստյորը նրան բժշկեց:

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ (ՄԱՆՐԵՆՆԵՐԸ) ԻՆՉ ՉԱՓԻ ՅԵՆ.


Ձեգնից ո՞վ գիտե, թե ի՞նչ և սանտիմետրը: Իսկ մի քանոն և ահա այս յերկարության 

Սանտիմետրի մի տասներորդ մասը կոչվում է միլիմետր:

Յեվ ահա մեկ միլիմետր յերկարության վրա տեղավորվում են 2000—4000 տուբերկուլոզի (թոքախտի) բակտերիաներ: Ասեղի մի գնդի չափ տեղում նրանցից կարող են տեղավորվել շատ միլիոններ: Մի գիտնական հաշվել է, վոր մի թոքախտով հիվանդի՝ մեկ ժամվա ընթացքում թքած բղլամի մեջ կային 22 միլիոն բակտերիաներ:

Ո՞Վ Ե ԶՈՐԵՂ.—ՍՍՈՆԱՄԱՆԻՔԸ ԹԵ՛ ԱՐԵՎԸ:

Ձյունի տակ պառկած եյին ֆոթի անտեսանելի ձողիկները (բակտերիաները): Դրանց գտավ գիտնական ֆոթը՝ մեզնից ավելի քան քառասուն տարի առաջ: Հենց դրանք են, վոր թոքախտ են առաջացնում: Ձողիկների համար ցուրտ եր. տաս աստիճան սառնամանիք: Սակայն նրանք չեյին մեռնում: Կենսաունակ եյին: Յեվ ահա յեղանակները տաքացան: Ձյունը հալվեց: Յերեաց կարմիր արևը: Ձողիկները տաքացան: Յերեխաներ, ձեգնից ո՞վ է արևի վաննա-



Նկ. 40. Տուբերկուլոզի (թորախոտ) բակտերիաներ.

Պատասխանի՛ր—նողիկներն ի՞նչպես ընկան ձյան տակ:


ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Ե ՔԹՈՎ ՇՆՉԵԼ.

Շատ յերեխաներ բերնով են շնչում, իսկ դա շատ վնասակար է: Ով բերնով է շնչում, նա ողը կուլ է տալիս շնչափողով և այնտեղ փոշի գցում. փոշին ընկնում է թոքերը: Փոշու մեջ կան բակտերիաներ, զրանք իրենց հետ վարակ են բերում: Պետք է միշտ քթով շնչել. այդ դեպքում ողը ուղղակի շնչափողով չի անցնի, այլ քթի միջով: Քթի մեջ ողը ջերմանում է, փոշին այնտեղ պահվում, և այնուհետև ողը ներս է գնում արդեն մաքրած և ջերմացած:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՄԻՄՅԱՆՑ ՎԱՐԱԿՈՒՄ.

Դուք յերբևիցե տեսե՞լ եք այնպիսի մարդու, վո-
րը շատ զայրանալուց, խոսակցության ժամանակ,

բերնից թուքի կաթիլներ է դուրս ցայտում: Դուրս է գալիս վոր հանգիստ մարդիկն ևս, մանավանդ անա-
տամ մարդիկ, խոսակցության ժամանակ, մանավանդ հազալիս ու խնչելիս, իրենց համար և ուրիշների հա-
մար աննկատելի կերպով, թուքի մանրիկ կաթիլներ են շաղ տալիս: Իսկ դրանցում կարող է վարակ լինել: Դրա համար ել իրեն կարգին պահելու ամենապլիս-
վոր կանոններից մեկը ասում է—հազալիս՝ բերանդ ձեռքով ծածկիր:



Նկ. 41.

ՍՈՎՈՐԵՑՐԵՔ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ՝ ՀԱԶԱԼԻՍ
ՁԵՌՔՈՎ ԲԵՐԱՆԸ ԾԱԾԿԵԼ



Նկ. 42.

ՅԵՐԵՆԱՅԻՍ ՄԻ ՀԱՄԲՈՒՐԵՔ.


— Կարող եք նայել, կարող եք խոսքով փաղաքշել, բայց յերեխայիս շրթունքներից դուք չպետք ե համբուրեք: Նրան խիստ մաքուր եմ պահում և միմիայն յես եմ համբուրում—և այն ել՝ թշերից:

Բացառիչ, քե ինչո՞ւ չի կարելի յերեխաների շրթունքից համբուրել:

ԻՆՉՔԱՆ ԲԱԿՏԵՐԻԱ ՅԵ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ՈՂՈՒՄ.

Մեկ խորանարդ ողի մեջ պարունակվում են բակտերիաներ—բազաբի փողոցի փողոտ ողի մեջ,

5500, այդում՝ 700, ծովի մակերևույթից 74 մետր բարձրության վրա՝ 28. (Նկ. 43, 44, 45):




Նկ. 43.

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՉԻ (ԲԱՐԱԿԱՅԱՎԻ) ՄԱՍԻՆ:

Լսե՞լ ես՝ վոր այդպիսի հիվանդությունն կա: Դու տեսե՞լ ես հաստավիզ յերեխաներ: Դրանց մասին բժիշկը ասում ե, վոր դրանց վզերի վրա գեղձերը ուռած են: Իսկ կուզ (սասպատավոր) յերեխաներ տեսե՞լ ես: Հիշի՞ր վոտքը հիվանդ Տիկոյին կամ Խաչիկին, վորոնք պառկած են հիվանդանոցում: Այդ բոլոր յերեխաները հիվանդ են տուբերկուլոզով: Դրանց բոլորին ել Գոխի ձողիկները դժբախտացրել են—ներս են մտել գեղձերի մեջ, վողնաշարի մեջ, վոսկորների



Նկ. 44.



Նկ. 45.


կամ թորքերի մեջ: Նրանք մարմնի մեջ են ընկել կամ շնչվող ողի հետ, կամ հուժ, չյեփած կաթի հետ, կամ կաշվի հիվանդության միջոցով: Այդ հիվանդության առաջն առնելու համար պետք է շնչել մաքուր ոդ, լավ մնվել, ցրտին սովորել, մարմինը ամրապնդել մարմնամարզությամբ և խաղերով:

Պատճի՛ր, դու ի՞նչ ես անում՝ փոքրեւոցի ջխարակ-վես յեւ սուրերկուրդով յհիվանդաւեսաւ:


**ԻՆՉՊԵՍ ԱՍՁԻԿԸ ԱՅՑԵԼԵՑ ԽԱՁԻԿԻՆ ՀԻՎԱՆ-
ԴԱՆՈՑՈՒՄ:**

«Իե սաս՛, ի՞նչպես է քո ընկեր Խաչիկի դրու-թյունը»,—հարցրեց Նազիկին հայրը: — «Յես գնացի հիվանդանոց նրան տեսնելու: Ա՛յ թե մաքուր են սլահում: Ներս մտա թե չե՛ ինձ սասցին—«Վերար-կուդ հանիր, հիվանդի մոտ վերարկույով գնալ չի կա-րելի»: Հանեցի: Ինձ հագցրին մաքուր սպիտակ վե-րնաշապիկ: — «Ա՛յդ ինչի համար է»,—հարցրեց հայ-րը: — «Ձե՛ վոր հիվանդների համար մաքրությունն ավելի շատ է անհրաժեշտ, քան առողջներին, իսկ այ-ցելողները իրենց հետ աննկատելի կերպով կարող են վարակ ներս տանել վերարկուների միջոցով: Այնտեղ պատերը ներկած են յուղաներկով: Դրանք լվանում են: Հատակները՝ մոմած: Անկողինները՝ սպիտակ են, մաքուր: Անկյուններում դրած են բարձր թքաման-ներ: Այդ—բոլորի համար է, վորպեսզի վոչ վոք հա-տակին չթքի և չկեղտոտի: Իսկ մահճակալների մոտ դրված փոքրիկ սեղանների վրա կան առանձին թքա-մաններ՝ ամեն մի հիվանդի համար: Բժիշկը մեզ պատ-

մեջ, վոր հազացող հիվանդները իրենց հետ միշտ պետք է կրեն զբազանի թքամաններ: Դա ամուր փակվում է: Հիվանդի մահճակալի վրա նստել չի կարելի: Բժիշկին ասաց, վոր Խաչիկը թորախոռ ունի և վոր նա մեծ դժվարությամբ կառողջանա, վորովհետև նա յերկար ժամանակ վատ պայմաններում է ապրել—փակված ողում և վատ է սնվել: Դրանից նա թուլաց'լ է: Իսկ վարակիչ հիվանդությունը, դա—կռիվ է մարդումամնի և բակտերիաների միջև: Ուժեղ մարմինը շուտ է հաղթում մանր, բայց վնասակար բակտերիաներին: Իսկ թույլ մարմին—նրա'նք են հաղթում:



Նկ. 46. Արյան կարմիր և սպիտակ գնդակներ:




Նկ. 47. Արյան սպիտակ գնդակներ, վորոնք կլանում են բակտերիաներին:


ՄԵՆՔ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿՈՎՈՒՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԴԵՄ.

Մեր արյունը—ջրիկ է, նրա մեջ լողում են արյան առանձին գնդակներ: Դրանցից վոմանք կոչվում են արյան կարմիր գնդակներ, մյուսները — սպիտակ գնդակն'եր: Սպիտակ գնդակները—դրանք մի տեսակի

վանդակներ են՝ ինչպես և մնացած վանդակները, վորոնցից, ինչպես տունը աղյուսներից, բաղկացած է մեր մարմինը: Դրանք մյուս վանդակներից տարբերվում են իրենց շարժունությամբ և բակտերիաներին վոչնչացնելու իրենց ընդունակությամբ: Նրանք հեշտությամբ են անց կենում արյունատար անոթների պատիկներով և շարժվում են այնտեղ, ուր բակտերիաներ են հայտնված լինում: Սկսվում է կռիվը: Սպիտակ գնդակները իրենց մեջ են առնում բակտերիաներին և դրանց կլանում: Բակտերիաները արտադրում են հեղուկներ, վոր թունավորում են մարմինը: Առողջ մարմնի մեջ արյունը առաջ է բերում հակաթույն. դա բակտերիաներին անփնաս է դարձնում: Թույլ, նվաղած մարդու արյունը հակաթույն չի առաջացնում, և մարդ մեռնում է՝ բակտերիաների թույնից վարակվելով:



Նկ. 48.



Նկ. 49.

Համե՞ղ եր կարկանդակը, վոր մայրիկը թխել եր: Իսկ գիտե՞ս թե ինչիցն է, վոր խմորը այնպես լավ եր յեկած: Տանտիկիններն ասում են—այդ նրանից է, վոր գրոժը (խաշը) թարմն է յեղել: Յե՛վ յեթե դրոժը քննենք խոշորացույցով (միկրոսկոպով), նրա մեջ կտեսնենք բակտերիաների նման մանրիկ եյակներ, վորոնք կոչվում են սունկիկներ: (Նկ. 48—դրոժի սունկիկներ: Նկ. 49 — մուրաքայի բորբոսի կամ հացի սունկիկներ): Թթու, այսինքն՝ դրոժով հացը, կամ կեֆիրը, կումիրը, կամ պանիրը մենք ստանում ենք այդ սունկիկների աշխատանքի շնորհիվ: Ինչպես տեսնում ես՝ նրանք լավ խոհարարներ են:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. ԱՌԱՎՈՏԸ ՏԱՆԸ

	ԵԶ
Ժամի 8-ին	3
Ամեն շաբաթ մենք բաղնիս ենք գնում	5
Մայրի՛կ, մի՛ բարկացիր, վոր յես շատ սապոն եմ գործածում	5
Յես ինչի՞ց խլացա	5
Ինչպես եր Նազիկը տանը աշխատում, յերբ Սուրբիկը դպրոց եր գնում	6
Զգուշացիր փոշուց	8
Թարմ ողը տարվա բոլոր յեղանակներին ել ոգտակար է	9
Մայրս ինչո՞ւ իրեն վատ զգաց	10
Արդյո՞ք առողջարար է շատ տաք սենյակում ապրել	10
Ջերմաչափի մասին	11

II. ԴՊՐՈՅՈՒՄ

Սուրբիկը—որապահ	13
Ո՞վ է Զենները և ինչո՞ւ համար են ծաղիկ պտովաստում	14
Մաքրության և առողջության անկյուն	15
Ահա՛ ինչպիսի պլակատներ պետք է կախ տրվեն մեր «Մաքրության և առողջության անկյունում»	16
Ի՞նչպես ապրենք, վոր առողջ լինենք	17
Յես առողջ եմ	18
Շատ տաք մի՛ հագնվիր	18

Յեւ բերանս՝ չեմ գնում վոչ մատոս, վոչ մատիտ, և վոչ մի բան, վոր կարող ե կեղտոտ լինել	18
Ինչո՞վ են զնաստկար մտկարույճները և ինչպես կռվի նրանց դեմ	20
Իմ աղիքների բնակիչը	23

III. ԴՊՐՈՅԻՅ ՀԵՏՈՒ ՏԱՆԸ

Ճաշին	25
Ի՞նչպես պետք է ընթաց սրբել	26
Սուրբիկը խնդիր ե լուծում	27
Գիրքը մի՛ կեղտոտիր	28
Կերակուրը բաց մի թող	29
Յես չեմ թողնում, վոր ճանճերն իմ ճաշին նստեն	29
Ընթրիքի ժամանակ	30
Ով քնելուց առաջ սենյակի ողջ մաքրում ե, նա գիշերը մաքուր ող ե շնչում	30
Նազիկի յերգը	31
Քնելուց առաջ առամներդ սրբիր	32
Մաքրվիր և պառկիր մաքուր անկողնում	33
Գլուխդ վերմակով մի՛ ծածկիր: Բաց բերանով մի շնչիր	33
Պետք է վա՛ղ պառկել քնելու	34

IV. ՎՈ՞Ր ՊԱՏԻ-ԼՐԱԳԻՐՆ Ե ԼԱՎ

«Ձեռք տալ»-ու սովորությունը վերացվում ե	35
Ուր լույս ու արե չեն ընկնում, այնտեղ բժիշկը հաճախ ե լինում	36
Ի՞նչպես եր Հասմիկը խնամում իր քրոջը	36
Սովորիր ուղիղ շնչել	37
Փողոցից փռչի մի՛ բեր բնակարանը	39
Ի՞նչու չպետք է յեղունգները կրծել	39
Ինչո՞ւ վանիկը անտառային դպրոցում ե սովորում	40

V. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ չպետք է հատակին թքել	42
Վարակիչ հիվանդությունների պատճառն ի՞նչ ե	43

Պաստյորի մեծ միտքը և հովվի հրաշալի սիրտը	44
Բակտերիաները (մանրենները) ի՞նչ չափի յեն	47
Ո՞վ ե գրեղ—սառնամանիքը թե՞ արեը	47
Ինչո՞ւ պետք է ընթաց շնչել	48
Ի՞նչպես են մարդիկ միմյանց վարակում	48
Իմ յերեխայիս մի՛ համբուրեք	50
Ինչքան բակտերիա յե պարունակվում ողի մեջ	50
Տուբերկուլյոզի (բարակացավի) մասին	51
Ի՞նչպես Նազիկը այցելեց Խաչիկին հիվանդանոցում	53
Մենք ի՞նչպես ենք կռվում բակտերիաների դեմ	54
Մարդուս համար ոգտակար սունկիկներն մասին	56

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —
Մոսկվա, Նիկոլսկե փող. № 10

- Ի. ՍՏԱԼԻՆ.— Գյուղացիական հարց: Գիներ 50 կոպ.
Ի. ՍՏԱԼԻՆ.— Ազգային հարց: (Տպագրվում է):
Վ. ԼԵՆԻՆ.— Պատգամներ յերիսասարդության. գիներ 15 կ.
Ն. ԲՈՒԽԱՐԻՆ.— Սոցիալիզմի ուղին յեվ բանվորա-գյուղա-
ցիական դաշինք: Գիներ՝ 1 ռ.:
Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՅ.— Մեր առաջին բանվ.-գյուղ. հեղափո-
խությունը. Գիներ 70 կ.
Ն. ԿՐՈՒՊՍԿԻՅԱ.— Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին: Գիներ 20 կ.
Լ. ԱՎՐԵՆՏՅԵՎ.— Ինչպես աշխուժացնել խորհուրդները. գ. 30 կ
Ջ. ՅԱՎՈՐՍԿԻՅԱ.— Կլարա Յեսկին (կենսագր.): Գիներ 10 կ.
Ն. ՏՅՈՒՐՅԱԿՈՒՆՈՎ.— Ազգ. հարցը յեվ դպրոցը: գ. 40 կ.:
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.— Հասարակագիտությունը 1 ասիանա-
ցի դպրոցում: գիներ 65 կ.
Ն. ՅԵԼԻՉԵՆՈՎ.— Ի՞նչ վարուեց կուս. XIV համագ. 112
էջ, գ. 30 կ.:
Ա. ԴՄԻՏՐՅԵՎ.— Տգիտությունը յեվ սնահավասությունը:
Գիներ 15 կ.
Մ. ԼԻՎԵՆՍԿԻ.— Գյուղատնտեսական հարկ: Գիներ 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ.— Գյուղացիության պահանջները յեվ խորհրդա-
լին դպրոցի ծրագրերը: Գիներ 12 կոպ.
Ս. Լ.— Գեղջկուհին յեվ յերեխաները: Գիներ 30 կ.
Պ. ՎԼՍՈՎ.— Հողի մեակումը յերաօտի ժամանակ: Գի-
ներ 40 կոպ.



- Լ. ՅՈԶԵՖՈՎԻԶ.—Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոոպե-
րացիան գյուղում): Գիւնը 30 կոպ.
- Ի. ՊՈՂՅՍՊԱՆՍԿԻ.—Աստու կամեր թե՞ գյուղասնեսա-
կան գիտությունը: գիւնը 20 կ.
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ.—Թե ինչպես կարելի յե գյուղում ե-
լեհարականությունն անցկացնել: Գիւնը 15 կ.
- ՌՈՒՏԻՆ.—Գյուղացիական հողաշինարարության այբու-
բենը: Գիւնը 30 կոպ.
- Պ. ԼԻՍՍՉԵՎ.—Խոզր գյուղացիների կերակրողն է: Գ. 18 կ.
- Ն. ԲՐՍՈՒԿԵ.—Թե ինչպես գերմանացին սխլպեց, վոր
կովը սարին յերկու անգամ ձնի. Գ. 15 կ.:
- Ա. ՍԿՈՄՈՐՈՍՈՎ.—Ինչպես բնօրէյ կարնառաս կով: Գ. 12 կ.
- Ա. ՍԿՈՄՈՐՈՍՈՎ.—Առաջին ոգնությունը հիվ. կենդա-
նուն: Գ. 17 կ.
- Ա. ԲՐՍՆՍՏՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ
հիվանդությունները: Գիւնը 17 կ.
- Ն. ՍԵՄՇԵՎ.—Թոբալս. (պասկերագար): Գիւնը 25 կ.
- Բ. ԳԻՆՍՏՈՒՐԳ.—Յերեխաների վարակիչ հիվանդություն-
ները. գ. 30 կ.
- Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր. Գիւնը 25 կ.
- Ա. ՍՊԵՐՍՆՍԿԻ.—Մոր այբբենարանը. (պասկ.): Գ. 16 կ.
- Ն. ՍԵՄԵԿԻՆ.—Արեվը, նրա վորդիները յեվ բունները: Գ. 40 կ.
- Վ. ՅԱԶՎԻՅԿԻՅ.—Մարդկային բնակարանի պատմութ.:
Գիւնը 15 կ.
- Գ. ԳՐՍՎԵ.—Ինչպես ե սարված սիյեգերը. (49 մկ.): Գ. 95 կ.
- ԳՐԵՄՅՈՅԿԻՅ.—Վորոս, կայծակ յեվ էլեհարականություն:
Գիւնը 40 կ.
- Ա. ԳՈՒ.—Կենդանիների յեվ մարդու ծագումը: Գ. 35 կ.
- Մ. ԳՈՐԿԻՅ.—Յերիսասարդ գրուրը: Մարդը: Գիւնը 15 կ.
- Մ. ՍԵՐԱՅԻՄՈՎԻԶ.—Պատմամբներ:

- Գ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ.—Մոծակի յեվ արջի մասին: (Պաս-
կերագար), գ. 15 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.—Ճամբորդություն այերոպլանով: (Պաս-
կերագար). Գիւնը 22 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.—Քիմիկոս Կուզկան: (Պասկերագար): Գի-
ւնը 28 կոպ.:
- Ա. ԿՈՒՊՐԻՆ.—Յերկրի յտրբերում: (Պասկերագար): Գի-
ւնը 15 կոպ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպես էյին ապրում սիկնիկները յեվ
ինչ արեց արհիներ զինվորը: (Պասկ.): Գիւնը 16 կ.:
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ.—Ինչպես Սաֆոն կարմիր բանակային
դարձավ: գ. 35 կ.
- Ֆ. ՖՈՒՔՍ.—Միմիսը մեկ ժամով: (Պասկերագար): Գի-
ւնը 18 կոպեկ:
- ՅԵ. ՌԱԿԻՆ.—Պիտներ, պահպանիւր առողջությունը: Գի-
ւնը 10 կոպեկ:
- Պ. Ռ.—Պասանի պիտներ: Ժողովածու: (Պասկ.). Գիւնը 60 կ.
- Պ. ԽԵՐՆԻԿՈՎ.—Կարմրամորթները: գիւնը 45 կ.
- «Թոչուններ», գունասիւ պայբում մանուկների համար.
գիւնը 20 կոպ.:
- ՈՒՅԳՍ.—Փոքրիկ հերոսուհին: Գիւնը 10 կ.
- ԵԿՄՈՆԴ ԳՄՄԻՉԻՍ.—Անձնվեր տղան: Գիւնը 10 կ.

Գիւնել, Москва, Никольская 10. Центриздату.
Կամ Յերեվան, Հայասանի Պետհրատին:

2013

« Ազգային գրադարան



NL0071844

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



Н. В. ФАЛЬКНЕР.

**Будем сильны и
здоровы.**

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская, 10.